



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<10 >> 09 2013թ.
ք. Արմավիր

N01/10/[24174]-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի N1064-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2005 թվականի դեկտեմբերի 30-ի N246 որոշումը և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 15/690 գրությունը.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն N1 հավելված:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, կենսաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ցանկը՝ համաձայն N2 հավելված:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ Ա. Ամիրջանյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ